ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Նաիրիի համանքապետարանը ստորև ներկայացնում է Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքում ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/42-2>> **ծածկագրով գնման ընթացակարգի** արդյունքում **2025 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N << ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/42-2>>** ծածկագրով պայմանագրում **2026 թվականի մարտի 11-ին կատարված** փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի բնօրինակից սկանավորված տարբերակը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագրի կատարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության նկարագրություն՝ Կողմերը համաձայնեցին երկարաձգել Պայմանագրիկատարման ժամկետը 3 ամիս՝ 2026թ. հունիսի 4-ը:

Փոփոխության հիմնավորում՝ ՀՀ կառավարության 2026թվականի փետրվարի 12-ի N142-Ա որոշում:

Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

<<04>> նոյեմբեր 2025թ. կնքված N *<<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/42-2>>*

ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Եղվարդ <<11>> 03 2026թ.

Նաիրիի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Ն. Սարգսյանի**, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Նաիրիի Բերրիություն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մեսրոպյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա** (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով <<04>> նոյեմբեր 2025թ. կնքված N *<<ԿՄՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/42-2>>* գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1 **Երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը 3 ամիս՝ մինչև 2026թ. հունիսի 4-ը:**

Պայմանագրի երկարաձգման հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի N142-Ա որոշումը և 2026 թվականի մարտի 2-ին <<Նաիրիի Բերրիություն>> ՍՊԸ-ի կողմից ստացված գրությունը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Նաիրիի համայնքապետարան	<<Նաիրիի Բերրիություն>> ՍՊԸ
Ք. Եղվարդ, Երևանյան 1	գ. Զովունի 1-ին փողոց 184
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ՓԲԸ Եղվարդ մ/ճ
Հ/հ 900112101028	Հ/հ 220183330152500
ՀՎՀՀ 03560239	ՀՎՀՀ 03522052
Համայնքի ղեկավար՝ Ն. Սարգսյան	Տնեօրեն՝ Հ. Մեսրոպյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ